ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Տպագրութեան համար արդէն պատրաստուած է «Պատմութիւն Աղուանից» Ա. հատորն։ Բ. հատորին (որ բովանդակելու է Աղուանից երկրի Մելիքութեան պատմութիւնը իւր ծագումից մինչև վախճանը) ձեռնարկելուց առաջ, սեպուհ պարտք համարեցինք կանխագրուրեամբ գիմել Դիզակի, Աւետարանոցի, Քոչիզի-Ծովատեղ գիւղի, Խաչենի, Ջրաբերդի, Կիւլստանի, Գետաշէնի, Գանձակի Ոսկանապատի, Բանանց ձորի, Փիփ գիւղի, Ղարա-Մուրադի, Ղազախի, Շուլավերի, Կռղեն գիւղի, Ղաբալայի և Նուխու Դաշբուլաղ գիւղի յարգելի մելիքազուն ըէկերին, որ շնորհք անեն գրաւոր հաղորդել մեզ՝ իւրեանց տոհմի ծագումը և պատմութիւնը՝ ուշ դարձնելով հետևեալ ամենակարևոր պայմաններին, որք են։

Ա. Ճշմարիտ լինելու է մեզ հաղորդելիք տեղեկութիւններն և ստոյգ՝ պատմութիւնն և պարզ գրուած գրութիւններն։

Բ. Ժամանակագրական կարգաւ դասաւորած լինելու են Մելիքների գահակալութիւնները, յաջորդութիւնները, անունները, գործերը, պատմութիւնները և վախճանած տարեթիւները, և, եթէ հնարաւոր է, գերեզմանների տապանաքարերից ստուգել Մելիքների վախճանած տարեթիւերը։ Մինչև անկեալ յայտնենք որ մեզ համար ամենակարևոր են Մելիք-Իսրայէլեանների, Ջալալեանց մելիքների, Մելիք-Մնացականեանների, Մելիք-Մատթեոսեանների, Մելիք-Սրբազեանների, Մելիք-Հախնազարեանների եւ Մելիք—Սարգսեանների հանդուցեալ մելիքների տապանաքարերի արձանագրութիւններ և տոհմային պատմութիւններն ճշտիւ. մնացեալների պատմութիւնները և տապանաքարերի արձանագրութիւնները ունինք մեզ մօտ։

Գ. Մելիքների հաստատութեան համար Շահերից շնորհուած հրովարտակների (ֆիրման) գրուած տարեթիւը, ամսաթիւը, հրովարտակների համառօտ բովանդակութիւնը, Մելիքի եշխած գիւղերի անունները, զանազան անձինքներից մելիքին գրուած նամակների պատմութեան արժանաւոր հատուածների պատճէնները, եթէ գտնուում են հնուց մնացած այսպիսի նամակներ։

Դ. Հաղորդել մեզ թէ ի՞նչ հանգամանքից Մեծ-Ղարամուրադից Շուլավերը փոխադրուած են Մելիք-Սարգսեաններն և ո՞ր թուին, իւրեանց սեպհական դաւառն յետ դարձողներ եղան, թէ ամբողջապէս մնացին Շուլաւերում այնուհետև։

Ե. Հաղորդել մեզ Մելիքութեան եշխանութիւնն վերջանալուց յետոյ, թէ ո՞ր մելիք, ինչ անուն ժառանգ թողած է, որ կենդանի է այժմ։ Այս հաղորդելու շնորհքը խնդրում ենք ոչ միայն իւրեանց հայրենիքում բնակող յարգելի Մելիքազուն ըէկերից, այլ և այժմ զանազան հեռաւոր և մերձաւոր քաղաքներում բնակողներից։

Զ. Ղազախի Կռղեն գիւղի Մելիք-Զահանկիրն աղգաւ Ուտի եղած է թէ հայ։ Իրանից առաջ և յետոյ ուրիշ մելիքներ նստած են Կռղենում թէ ոչ. Մելիք-Զահանկիրի տոհմից ով կայ այժմ։ Նմանապէս Ղազախի Թովուզ Ղալա գիւղի եկեղեցու արձանագրութեան մէջ յիշուած Մելիք-Ղորխմազն 1, Միափոր գիւղի Մելիք-Աբա և Թոռն իւր Մելիք-Աբա 2, Փիփ գիւղի եկեղեց. փայտեայ սիւնի վերայ՝ Մելիք-Հախնազարն 3, Բանանց գիւղի կողմերում Սիմէոն (Սիմաւոն) Մելիք 4, Մելիք Ովանէս, որդին Մելիք-Մատթեոսն 5, Թոռունք Աղաճան և Սարգիս, որոց մասին ևս կարևոր են տեղեկութիւններ։

Մինչև առաջիկայ հոկտեմ. ամսի վերջն կը սպասենք պատասխաններին, յուսալով որ մեր սիրելի հայրենակից մելիքազուն ըէկերն նախանձախնդիր լինելով՝ կը փութան անմահացնել իւրեանց հայրերի և պապերի անունները մեր ձեռնարկելիք պատմութեան էջերում։

Մեր այս խնդրածները ճշտիւ կատարող ազնիւ հայրենակիցներն մեզնից կըստանան երկու երկու գիրք Բ. հատորիս տպագրութիւնից յետոյ։

Մակար եպիս. Բարխուտարեանց

6 Փետ.·
1900 ամի
ի Ս. Էջմիածին

„ԼՈՒՄԱՅ“

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Ե. տարի

Հրատարակւում է տարեկան երկու գիրք

ԲԱԺԱՆՈՐԴԳԻՆՆ Է 3 ՐՈՒԲԼԻ

իւրաքանչիւր գիրքն առանձին 2 ր.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „ЛУМА“ կամ Прот Гюту Аганьянцу.

---

1 Արցախ եր. 330։
2 Ջամարեա սարկաւագ Ա. Հաս. եր. 24—26։
3. Արցախ եր. 298։
4. » » 45։
5. » » 282։